ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Ազգային անվտանգության մարմինների հարգելի՛ աշխատողներ,

Շնորհավորում եմ ձեզ և համակարգի վետերաններին մասնագիտական տոնի կապակցությամբ:

Ձեր ծառայությունը պետության անվտանգության համակարգի առանցքային հենասյուներից է: Օր օրի, բարձր պատասխանատվությամբ ու մասնագիտական նվիրումով իրականացնելով Ձեր բարդ և կարևոր առաքելությունը՝ Դուք կանգնած եք Հայաստանի Հանրապետության պետականության, սահմանադրական կարգի, ազգային շահերի և քաղաքացիների անվտանգության պաշտպանության առաջնագծում:

Ձեր աննկատ, սակայն վճռորոշ աշխատանքը պահանջում է բարձր պատրաստվածություն, սկզբունքայնություն, անձնական տոկունություն և հայրենասիրություն: Այդ արժեքների շնորհիվ է, որ մեր պետությունը դիմագրավում է ժամանակի մարտահրավերներին և ամրապնդում անվտանգության համակարգը:

Մաղթում եմ ձեզ ամուր առողջություն, անսպառ ուժ ու կամք, ծառայողական հաջողություններ և անվտանգ ծառայություն՝ ի բարօրություն մեր պետության և ժողովրդի:

Թող ձեր ամենօրյա աշխատանքը լինի գնահատված, իսկ հայրենիքին ծառայելու ճանապարհը՝ խաղաղ և արժանապատիվ: